ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/208

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարան

Մասնակից՝ «Հայկ Գալստյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

«Հայկ Գալստյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի, Հ. Գալստյանի

ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Ս. Մանուկյանի, Ի. Մարտիրոսյանի, Հ. Մելքոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, վերհան հարթակով բեռնատարի /ավտոաշտարակ օրրանով/ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13927-2020 գրությամբ «Հայկ

Գալստյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի 08.09.2020թ.-ի թիվ 1484/20 գրության հիման վրա, 15.09.2020թ.-ին «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 15.09.2020թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/208 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանը 08.09.2020թ.-ի թիվ 1484/20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի կարիքների համար վերհան հարթակով բեռնատարի /ավտոաշտարակ օրրանով/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը կայացել է Մարմաշենի համայնքապետարանում

2020 թվականի սեպտեմբերի 01-ին ժամը 11:00-ին: Հայտ ներկայացրել է մեկ մասնակից «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն, որի ներկայացրած հայտի Հավելված 1.1-ում տեխնիկական բնութագիր սունյակում ամբողջությամբ լրացված է եղել մեր կողմից հրապարակված հրավերում նշված տեխնիկական բնութագիրը, նշված չի եղել մատակարարվող մեքենայի տեխնիկական բնութագիրը, կցված չի եղել հրավերում նշված և պարտադիր հանդիսացող մեքենայի տեխնիկական անձնագրի և գնման լոտի համարի լուսապատճենները:

Նույն օրը «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն էլ. փոստի միջոցով ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունների մասին և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել անհամապատասխանությունների շտկում:

2020 թվականի սեպտեմբերի 02-ին «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն պատասխանել է ծանուցմանը ուղարկելով Հավելված 1.1-ը, սակայն տեխնիկական բնութագրի սյունակը թողել է անփոփոխ, հստակեցրել է միայն մեքենայի արտադրման տարեթիվը, ինչպես նաև չի ուղարկվել մեքենայի տեխնիկական անձնագրի և լոտի համարի պատճենները:

Հայտը մերժվել է համաձայն Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1422-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հայկ Գալստյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13927-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Մարմարաշենի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 25.08.2020 թվականին հրապարակել է թիվ «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով (այսուհետ նաև

Ընթացակարգ), հայտարարել է գնանշման հարցում՝ իր կարիքների համար «Վերհան հարթակով բեռնատարի/ավտոաշտարակ օրրանով» ձեռքբերման նպատակով:

Պատվիրատուն 08.09.2020 թվականին հրապարակելէ գնման ընթացակարգը Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով չկայացած հայտարարելու մասին:

Պատվիրատուի կողմից իր կարիքների համար «Վերհան հարթակով բեռնատարի/ավտոաշտարակ օրրանով» ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը հաստատված և տեղեկագրում հրապարակված չէ:

Դիրքորոշման փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին «ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկագիրը՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների

պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...):

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տփալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է արձանագրել հետևյալը, որ գնման գործընթացի իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանն է, որը կարող է հիմք հանդիսանալ գնման գործընթաց սկսելու, պատասխանատու ստորաբաժանում, գնումների համակարգող և հանձնաժողով ձևավորելու համար: Ի դեպ պետք է փաստել, որ գնումների պլանը պետք է տեղեկագրում հրապարակվի օրենքով սահմանված կարգով մինչ գնման ընթացակարգի սկիզբը, որի արդյունքում նոր միայն հնարավոր կլինի փաստել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի առկայությունը: Այլ կերպ ասած, եթե օրենսդրական կարգի պահպանմամբ հրապարակված

չէ գնումների պլանը, ապա առկա չէ իրավական հիմքը և Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ և ոչ իրավաչափ է: Ոչ իրավաչափ ընթացակարգի շրջանակում չի կարող խոսք լինել մասնակցի կողմից պարտավորությունների ստանձնման մասին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրավաչափ որոշումների մասին և չի կարող առաջացնել պատասխանատվության հիմքեր:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն օրենքով սահմանված կարգով չի հրապարակել գնումների պլանը: Եվ արդյունքում սույն գնման ընթացակարգի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելու 25.08.2020 թվականի դրությամբ առկա չէ հրապարակված գնումների պլան, որը ենթադրում է, որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Պատվիրատուի կողմից խախտելով առկա օրենսդրական կարգը: Ուստի վերոգրյալով պայմանավորված պետք է փաստել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավազոր չէ նրա կողմից կայացված որոշումները իրավաչափ չեն, սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Պատվիրատուի կողմից խախտելով առկա օրենսդրական կարգը: Ուստի Ընթացակարգի շրջանակում առկա չէ Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից պարտավորության ստանձման հիմքեր և դրանց ենթադրյալ խախտման հիմքով էլ առկա չեն պատասխանատվության հիմքեր:

Ուստի առաջնորդվելով վերոգրյալով Խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2020/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից վերհան հարթակով բեռնատարի /ավտոաշտարակ օրրանով/ ձեռքբերման նպատակով 25.08.2020թ.-ին հայտարարվել է «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն:

iii. «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում նշված չի եղել մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և կցված չեն եղել մեքենայի տեխնիկական անձնագրի և գնման լոտի համարի լուսապատճենները:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. 03.09.2020թ.-ին կայացած նիստում Հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ Հավելված 1.1-ի տեխնիկական բնութագրի սյունակը կնկին լրացված է եղել ոչ ճիշտ, հստակեցվել է միայն մեքենայի արտադրման տարեթիվը, մյուս բոլոր տողերում նշված տեխնիկական բնութագրում մատակարարվող ապրանքի վերաբերյալ ոչ մի հստակ տեխեկատվություն չի եղել, կրկին գրված է եղել հրավերում նշված տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև չի ուղարկվել մեքենայի տեխնիկական անձնագրի և լոտի համարի լուսապատճենները:

vii. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա ենթակետը, որոշել է Մասնակցի հայտը մերժել և տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13927-2020 գրությամբ «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված)

տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, ընդ որում, որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի կողմից վերհան հարթակով բեռնատարի /ավտոաշտարակ օրրանով/ ձեռքբերման նպատակով 25.08.2020թ.-ին հայտարարված «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ և Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Մասնակիցը սահմանված ժամկետում թերի է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի դրույթները, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝

Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարան կողմից «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՇՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-20/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ն Պատվիրատուի կողմից հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, թերի շտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13927-2020 գրությամբ «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/208 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հայկ Գալստյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**